



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 34

### ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՅԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1,Քաղաքացի /Խաչիկ Գարուշի Գրիգորյան/, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի մարտի 28-ին ժամ12:00-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ կողմից տրված տվյալների Տանձուտ համայնքում գտնվող 3000 քմ.ծածկազիր 086-013, կորիզավոր , 1000 քմ ծածկազիր 009-007 մակերեսով տնամերձ,6800քմ.ծածկազիր 086-012 վարելա հող ջրովի, 2100քմ տնամերձ ծածկազիր 020-011,6803քմ կորիզավոր ծածկազիր 086-012,հողամասերը հանդիսանում է քաղաքացի /Խաչիկ Գրիգորյան/ սեփականությունը, ինչը, <<Հողի հարկի մասին>>ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: /ծածկազիր 086-013/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 29592ՀՀ դրամ, ինչը 2016-2019թթ. , /ծածկազիր009-007/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 6924ՀՀ դրամ, ինչը 2016-2019թթ. ծածկազիր 086-012/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 37272ՀՀ դրամ ինչը 2017- 2019թթ. , /ծածկազիր020-011/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 14540ՀՀ դրամ, ինչը 2016- 2019թթ. և /ծածկազիր086-012/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 16776ՀՀ դրամ, ինչը 2016թթ.ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի / Խաչիկ Գրիգորյան /` Լշված ժամանակահատվածի համար ծածկագիր/086-013/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 29592 ՀՀ դրամ` ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ` 6539 ՀՀ դրամի չափով:  
/ծածկագիր009-007/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 6924 ՀՀ դրամ` ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ` 1791 ՀՀ դրամի չափով: Ծածկագիր/086-012/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 37272 ՀՀ դրամ` ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ` 4557 ՀՀ դրամի չափով:

Ծածկագիր/020-011/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 14540 ՀՀ դրամ` ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ` 3213 ՀՀ դրամի չափով:  
Ծածկագիր/086-012/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 16776 ՀՀ դրամ` ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ` 9696 ՀՀ դրամի չափով:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի«բ» կետի հիմքով Տանձուտի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2019 թվականի մարտի 28-ին ժամ 12:00-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումների, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է` և չի ներկայացել քաղաքացի /Խաչիկ Գրիգորյան//RR168759980 18.03.2019թ/: Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի /Խաչիկ Գարուշի Գրիգորյան/ բացակայությամբ: Հիմք թիվ N11 արձանագրություն:

3.Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն` յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>>ՀՀ օրենքի 1-ին հոդվածի` հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>>ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի` հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի` Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ` 0.15 տոկոսի չափով:

Հարկային պարտավորություններից ծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>>ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով`

4.Քաղաքացի/ ԽաչիկԳարուշիԳրիգորյան / հոգուտ Տանձուտ համայնքի բյուջե գանձել ՀՀ դրամ, որից 105104 ՀՀ դրամ որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 25796ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ :

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տանձուտ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից /մինչև 2019թ հունիսի 1-ը/ երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տանձուտ համայնքի ղեկավարը:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**



**ՄԻՆԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 35

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 22.02.2019 թվականի N 7 որոշումը և սոցիալական օգնություն տրամադրող հանձնաժողովի ԹԻՎ2 եզրակացությունը

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի բյուջեի սոց. օգնությունից դրամական օգնություն հատկացնել համայնքի մեկ ընտանիքի՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ.  
գ.Տանձուտ



Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի  
ղեկավարի 2019 թվականի ապրիլի 04 -ի  
թիվ 35 որոշման



Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացված  
դրամական օգնություն

ՍՈՑԻԱԼԱԳԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

ՑՈՒՑԱԿ

N	Անուն, Ազգանուն	անձնագիր	Գումարի չափը /ՀՀ դրամ/
1.	Նաիրա Մուրադյան	AM0536062	64 000
	Ընդամենը		64 000



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 36

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՑՐԱԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի 1066-Ն որոշման 7-րդ կետով և հիմք ընդունելով հողասեփականատերերի դիմումները

Որոշում եմ՝

- 1.Գյուղատնտեսական ցածրաբժեք հողատեսքերն ավելի բարձրաբժեք հողատեսքերի փոխադրել համաձայն հավելվածի:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ




*(Handwritten signature)*

ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ.  
գ.Տանձուտ

Հավելված

Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի  
դեկավարի 2019 թվականի ապրիլի 16-ի  
թիվ 36 որոշման



Գևորգյան Ռաֆիկ 04-092-092-026 0.30 հա վ/հ Ժիրան 2019թ. գանանը



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿՐԱԿԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 37

### ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՅԱՆՁ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի /Սեդրակայն Սեդրակ/, հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2019 թվականի ապրիլի 15-ին ժամը 12:00-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Արմավիրի մարզի Տանձուտ համայնքի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության ն օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2.Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.  
Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ կողմից տրված տվյալների Տանձուտ համայնքում գտնվող 3000 քմ. ծածկագիր 056-004, վարելահող ջրովի և 3700 քմ ծածկագիր 004-009 մակերեսով տնամերձ հողամասերը հանդիսանում է քաղաքացի /Սեդրակայն Սեդրակ/ սեփականությունը, ինչը, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: /ծածկագիր 056-004/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 59052 ՀՀ դրամ, ինչը 2008-2019թթ. և /ծածկագիր 004-009/ հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 70460 ՀՀ դրամ, ինչը 2008-2019թթ. և ընկած ժամանակահատվածում չի վճարվել:

Քաղաքացի /Սեդրակայն Սեդրակ/ նշված ժամանակահատվածի համար ծածկագիր /056-004/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 59052 ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 25761 ՀՀ դրամի չափով: /ծածկագիր 004-009/ հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 70460 ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 30106 ՀՀ դրամի չափով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Տանձուտի համայնքապետարանում հարուցված վարչական



Սեդրակյան//RR255519691 10.04.2019թ/: Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացի /Սեդրակյան Սեդրակ/ բացակայությամբ: Հիմք թիվ N9 արձանագրություն:

3. Վարչական ակտը նդունելու հիմնավորումը.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր վա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.15 տոկոսի չափով: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին, 16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Քաղաքացի /Սեդրակ Սեդրակյան/ հօգուտ Տանձուտ համայնքի բյուջե գանձել ՀՀ դրամ, որից 185379 ՀՀ դրամ որպես հողամասի համար վճարման ենթակա հողի հարկի գումար, 55867 ՀՀ դրամ, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տանձուտ համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու /մինչև 2019թ հունիսի 19-ը/ ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տանձուտ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**  **ՄԻՍԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՆՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տանձուտ համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Տանձուտ, 098432032, tandzut.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 11

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով եկեղեցու մոտ գտնվող խորքային պոմպի էլեկտրական վահանակի գործարկիչի վերանորոգման աշխատանքները կազմակերպելու համար

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ /Մ.Միքայելյան/ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 3 օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին :
3. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ավագանու անդամներ, Արմեն Խաչատրյան, Ավագ Միքայելյան /համաձայնությամբ /:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԽԻԹԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019թ.  
գ.Տանձուտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱԼՁՈՒՏ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 15 Ի N 11 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ



ԽՄԵԼՈՒ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ  
ՍՊԱՍԱՐԿՈՂ ԲԱՆՎՈՐ

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝

Գ.Խուրշուդյան